

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)
տնօրենների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ)
ՈՐՈՇՈՒՄ թիվ 28.06.2023/1

(Կազմված է «28» հունիսի 2023 թ.-ին և բաղկացած է 2 (երկու) թերթից)

Անցկացման վայր՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2
Անցկացման տարի, ամիս, ամսաթիվ՝ 2023 թվականի հունիսի 28
Սկիզբ՝ ժամը 09:30

Խորհրդի նիստին ներկա էին՝

- 1) Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ
- 2) Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ
- 3) Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ
- 4) Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ

ՀՀ օրենսդրությամբ և «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության կանոնադրության համաձայն՝ քվորումն ապահովված էր, խորհրդի նիստն իրավասու էր:

ՕՐԱԿԱՐԳ՝

Տեխաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում՝ շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ:

Ձեկուցող՝ Վազգեն Նիկոլյան

ՔՆՆԱՐԿՎԵՑ՝

Օրակագում ընդգրկված հարցը՝ տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման անհրաժեշտությունը՝ շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ: Քննարկվող հարցի վերաբերյալ Ձեկուցողը հայտնեց, որ ուսումնասիրելով Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունը և հաշվեկշիռը պարզվել է, որ Ընկերությունն ունի կուտակված շահույթ՝ 13.928.124.000 (տասներեք միլիարդ ինը հարյուր քսանույթ միլիոն հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամի չափով, որից, համաձայն Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 27.06.2023 արձանագրության, որոշվել է Ընկերության բաժնետերերին չվճարել (չբաշխել) շահութաբաժիններ: Ձեկուցողի կողմից առաջարկվեց կուտակված շահույթի մի մասը՝ 314.619.200 (երեք հարյուր տասնչորս միլիոն վեց հարյուր տասնինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամը, փոխանցել Ընկերության կանոնադրական կապիտալ՝ տեխաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնելու համար: Ձեկուցողը հայտնեց, որ նման առաջարկը պայմանավորված է Ընկերության ֆինանսատնտեսական կարողությունները մեծացնելու անհրաժեշտությամբ: Ընկերության կուտակված շահույթի մի մասը՝ 314.619.200 (երեք հարյուր տասնչորս միլիոն վեց հարյուր տասնինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամը, Ընկերության կանոնադրական կապիտալ փոխանցելու եղանակով կանոնադրական կապիտալը ավելացնելու

դեպքում Ընկերության մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կկազմի 155 (հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ, իսկ Ընկերության կանոնադրական կապիտալը՝ 9,753,195,200 (ինը միլիարդ յոթ հարյուր հիսուներեք միլիոն հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Հարցը դրվեց քվեարկության՝	
Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ	ԿՈՂՄ
Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՄ
Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՄ
Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՄ

Ընդամենը՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, չի մասնակցել՝ 0

ՈՐՈՇՎԵՑ՝

1) «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնելու նպատակով ընկերության տեղաբաշխված մեկ հատ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը մեծացնել 5 (հինգ) ՀՀ դրամով, որի արդյունքում մեկ հատ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը կկազմի 155 (հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ:

2) Ավելացնել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության կանոնադրական կապիտալը 314.619.200 (երեք հարյուր տասնչորս միլիոն վեց հարյուր տասնինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամով, «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության կուտակված 13.928.124.000 (տասներեք միլիարդ ինը հարյուր քսանութ միլիոն հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ շահույթից 314.619.200 (երեք հարյուր տասնչորս միլիոն վեց հարյուր տասնինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամը փոխանցելով Ընկերության կանոնադրական կապիտալ, որի արդյունքում «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության կանոնադրական կապիտալը կկազմի ընդհանուր 9,753,195,200 (ինը միլիարդ յոթ հարյուր հիսուներեք միլիոն հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ կազմված 155 (հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ անվանական արժեքով 62.923.840 (վաթսուներկու միլիոն ինը հարյուր քսաներեք հազար ութ հարյուր քառասուն) հատ հասարակ անվանական բաժնետոմսերից (62.923.840*155=9,753,195,200):

3) Գումարել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության բաժնետերերի արտահերթ ժողով՝ կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ

Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ

Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ

Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ